

խարհը խոստանում է մեզ լայն ճանապարհը. բայց սա—անյուսալի մոլորութեանց և խաբէութեանց ճանապարհ է: Իսկ Դու—Դու—բաց ես անում մեր առաջ նեղ ճանապարհ, բայց սա տանում է երկինք: Ա՛հ, տո՛ւր մեզ ամենքիս երթալու նրանով, որպէսզի մենք հասնենք այն ճշմարիտ կեանքին, որոյ մէջ կարող կլինենք զարգանալ գիտութեան, սրբութեան, սիրոյ մէջ և անդադար նորոգուելըստ Քո պատկերի:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՍՈՒՐԻ ԳՐԻԳՈՐ ԵՒ ՈՒՐԱՅՈՂ ՅՈՒԼԻԱՆՈՍ.

III

(Նաղա—նաղա—նե—ն)

Այս բաղդաւոր կեանքից մի կամ երկու տարի յետոյ՝ Պոնտոսի վանքից հարկեցուցիչ պարտաւորութեամբ Գրիգորը Նազիանզ կանչուեց— եկեղեցին, ուր եպիսկոպոս էր նորա հայրը, և ինքն նորա հայրը նորա օգնութեանն ու ներկայութեանը շատ պէտք ունէին: Կոստանցիոսի դարը ժողովների դար էր. որոնց շատերը բոլորովին միասակար էին: Նա քրիստոնէական կատարեալ և պարզ կրօնքը, ասում է Ամմիանոս Մարցելիանոսը, շփոթում էր աղայական սնահաւատութեան հետ, և աւելի խճճումներով քան արժանաւոր կազմակերպութեան միջոցով շատ պառակտում էին անբաժնիք և առաջ բերեց. և այս յառաջ եկած պառակտումները աւելի ևս զօրացրեց բանաւոր հակաճառութիւններով: Եպիսկոպոսները այս և այն կողմը Ժողովէրէ զնալով, ինչպէս նոքա կոչում էին, ձգտում էին բոլոր կարգերը ենթարկել իրանց որոշումներին. և այդ միջոցով էլ Կոստանցիոսը շատ խանգարեց կայսերութեան սուրհանդակային (պօստ) ծառայութիւնը: Այդ դարու վէճերի առարկան էր բացառապէս Ա. երրորդութեան մասին վարդապետութիւնը, որ 325 թուին ռահմանել էր Նիկիայի տիեզերական ժողովը, և Քրիստոսի անձնաւորութեան մէջ երկու բնութիւնների գերբնական, դժուարին և վերացական յարաբերութիւնը: Կոստանցիոսն աւելի

տրամադիր էր արիոսական տեսութիւնները քարոզելու, եպիսկոպոսներին իւր կամքին հպատակեցնելու համար 359 թուին երկու մասերի բաժանուած մի ժողով գումարեց, որի արեւելեան մասը իւր նիստերը պէտք է անէր Խաւրիայի Սելեկիա քաղաքում, իսկ արեւմտեանը՝ Խտալիայի Հռիմփնի քաղաքում: Սելեկիայի մասը ընդունեց Սիրմիական ժողովի կիսարիոսական հերետիկոսական հանգանակը մի քանի կերպարանափոխութիւնից յետոյ, ասելով որ Որդին «ըստ գրոց՝ նման է Հօրը», սակայն բաց թողնելով բառերս «ամեն յարաբերութիւններում» և բոլորովին բաց թողնելով վիճելի «գոյութիւն» բառը, այն հիմամբ՝ որ այդ բառը Ս. Գրքում չէ հանդիւրում: Հռիմփնի ժողովի հայրերը կամենալով շուտ վերադառնալ իրանց տեղը, և կայսրի ձեռք առած միջոցներից տաղտկացած՝ առանց քննադատելու ընդունեցին սիրմիական ձևակերպութիւնը ոմանք՝ երկիւղից, ոմանք էլ այն պատճառով՝ որ նոցա էլ խորամանկութեամբ այն կողմն էին թեքել (359 թ.): 400 եպիսկոպոսներից միայն 20 ը հրաժարուեցին ստորագրելուց, մեծամասնութիւնը ամենաշողովմարար բովանդակութեամբ շնորհակալութեան մի նամակ գրեց, այնպիսի շողոքորթութեամբ, որ միայն կարելի էր մի թագաւորի գրել: Կոստանցիոս պահանջում էր որ այդ հանգանակը ամբողջ կայսերութեան մէջ ընդունուի և չընդունող եպիսկոպոսներին հալածում էր:

Անդրանիկ Գրիգորը (հայրը) իբրև նազիանգի եպիսկոպոս՝ նոյնպէս ստորագրեց այդ շողոքորթիչ թղթին, բայց ոչ թէ երկիւղից, որոյ մասին հաւաստի կարող ենք լինել (որովհետև նա միշտ որպէս արիասիրտ մարդ էր հանդիսացել), այլ այն պատճառով՝ որ աստուածաբանութեան հմուտ չէր և լաւ չէր ըմբռնել արիոսական խաղաղաւնքները: Դորա համար նորա թեմի վանականները անսովոր յուզման մէջ ընկան: Թէև նոքա աստուածաբանութեան աւելի անտեղեակ էին քան իրանց եպիսկոպոսը, բայց ուղղափառութիւնը միշտ հաստատուն էին պահում և ինչ որ համաձայն չէր Աթանասի հանգանակին՝ նոցա համար մոլորութիւն էր: Մինչև այդ ժամանակը բաղդաւոր և իսաղաղ թեմին պառակտումն էր սպառնում: Այսպիսի պարագայում 360 թուին Գրիգորը իւր հօր և վանականների

միջև խաղաղարար դուրս եկաւ: Դեռ ցայսօր մնացած իւր մի ճառում, նա, օգտուելով իւր ազդեցութիւնից՝ ապացուցանում է թէ իւր հայրը միշտ ուղղափառ է եղել, և «Հերիտիկոսական մրուրով չապականուած իւր հոգւովը» երբեմն խափանել է այն մոլորութիւնը, որի մէջ այսօր նա ընկած է համարվում պարզամտութեամբ: Նա մի և նոյն ժամանակ գովաբանում է վանականներին նոցա նախանձայուգութեան համար որ, եթէ և սխալ էր և չափազանց իւր արտայայտութեանց մէջ, սակայն առաջացած էր բոցավառ սիրուցն առ հաւատը: Այս գործում Դրիգորը կարողացաւ իւր սրտին յոյժ սիրելի խաղաղութիւնը քրիստոնեաների մէջ շուտով վերահաստատել:

361 թուի ծննդեան տօնը Դրիգորի կեանքի մէջ արժանայիշատակ միակ դէպքն էր: Այն ժամանակի տարօրինակ սովորութեան համեմատ նորան յանկարծ բռնեցին և հայրն ու խմբուած ժողովուրդը նորան հարկադրեցին քահանայական կոչումն ընդունել: Երանելի—Աւգուստինոսին էլ այսպէս պատահեց: Պոստիդիոսը պատմում է, որ ձեռնադրութեան այդ ձեւը բոլորովին սովորական էր, և Ս. Բարսեղ Մեծի նամակներից գիտենք, որ այդ բանին ոչ մի արգելք չէր կարող լինել՝ բաց ի հակառակ մտքով արած երդումից: Իէպ ի այս «հոգեւորական բռնութիւնը» ինչպէս Դրիգորը անուանում է այդ, նորա տհաճութիւնը ոչ ձեական էր և ոչ էլ պաշտօնական: Նորա վերաբերութեամբ կատարուած բռնութիւնը սաստիկ վշտացրեց նորան և նա սաստիկ վրդոված՝ 362 թուին Աստուածայայտնութեան տօնին փախաւ Պոնտոս՝ Բարսղի մօտ: Միայն այստեղ կարողացան հանգստացուցիչ և լաւ մտքերը նորա վերայ ազդեցութիւն ունենալ: Նա զգաց որ դատապարտելի քայլ է արել և իւր հօր սրտմտեալ բարկութիւնից վախենալով՝ նորից ընկաւ հոգսերի անդունդը: 362 թուի զատկին նա դարձեալ նազիանգ վերադարձաւ և զատկի կիւրակէ օրը իւր առաջին քարոզն ասաց: Իւր քարոզի սկզբում նա ասում է որ զատիկը պէտք է լինի քրիստոնէական հաշտութեան ժամանակը: Այդ պատճառով էլ նա դառնում է դէպի խմբուած քրիստոնեաներն ինչպէս դէպ ի իւր եղբայրներն, և յատկապէս դէպ ի այն անձինքը, որոնք ատում էին նրան,

աւելի ևս դէպ ի նոքա, որոնք սիրում, թէև նոքա բռնաւորի պէս էին վարուել՝ նորան քահանայանալ հարկադրելով: Իւր փախստեան համար նոքա իրանց կողմից պէտք է ներէին նորան, որովհետև այնպիսի սարսափելի կոչման յանձնառութեան համար ցոյց տուած անկեղծ գովամակութիւնն, որ Մովսէս և Երեմիա էլ ցոյց տուին, կարող էր Ահարոնի և Նաայի յօժարամտութիւնից աւելի լաւ կողմնն էլ ունենալ:

Այս թեթեւ ակնարկութիւնը միանգամայն գոհացուցիչ չերևեց: Քրիստոնեաներից գտնուեցին և այնպիսիք, որ նորան դատապարտեցին խտուրթեամբ որպէս թեթեամիտ և յողդողդ մարդու: Կային որ նորան մեղադրում էին թէ Յուլիանոսից է վախճանում, ոմանք էլ նորան հոգեւոր կոչումն արհամարհում էին, այլք աւելի ևս զայրութով՝ ասում էին թէ, նա տհաճ լինելով որ միանգամայն եպիսկոպոս չարին, նորա համար փախաւ: Գրիգորը հարկ համարեց այդ մեղադրութիւնները հերքել, և հերքեց իւր երկրորդ քարոզում, որի միայն ջատագովական մասն անշուշտ խօսեց: Այս քարոզի մէջ նա ժողովրդի առաջ բաց արեց իւր սիրտը և լիապէս բացատրեց այն շարժառիթները, որոնցով ինքն առաջնորդուել էր: Ամենից առաջ, ասում է նա, յանկարծակի դէպքը իրան այնպէս ապշեցրեց, որ ձեռնադրութիւնը որոտման կայծակի պէս էր ազդում իւր վերայ և խանգարում իւր բանականութիւնը, երկրորդ՝ նա միանջնութիւն էր ուխտել և իւր կեանքի այդ վտանգաւոր րօպէին իւր այդ նպատակից զրկուեց, երրորդ՝ (թէև ինքն էլ չէ պնդում այդ կէտի վերայ յամառուել) ինքն ժամանակակից հոգեւորականութեան մեծ մասի բարոյականութեան ստոր մակերևութից ամաչում էր: Ինքն նոցա շատերի փոխանակ ամաչում էր, շատերի՝ որոնք իրանց եղբայրներից ոչ մի բանով լաւ չլինելով, այլ միշտ անգամ աւելի վատ լինելով՝ անարժան լինելով հոգեւոր կոչման ստորին աստիճանին անգամ, անլուայ ձեռքով և անսուրբ սրտով շտապում էին դէպ ի սրբութիւն սրբոց և սուրբ սեղանի վերայ պաշտօններ էին կատարում: Եւ չորրորդ՝ որ իւր ամենագորաւոր հիմքն էր, քահանայական աստիճանին ինքն իրան անարժան էր համարում: Այս հարկադրում է նորան նկարագրել քահանայի

պարտականութիւնները: Քաջանան պէտք է բոլոր այլ հաւատացեալների օրինակը լինի. և ոչ միայն ազատ բոլոր արատներից, այլ և ձգտումն պէտք է ունենայ կատարեալ լինելու ամեն առաքինութեանց մէջ: Այս պատճառաւ էլ, որքան մեծ պէտք է լինի քաջանայի մարդկային հոգիների ճանաչողութիւնը նոցա բոլոր բազմազանութեամբ. նա պէտք է խորը թափանցած լինի քրիստոնէութեան բոլոր ճշմարտութիւնների մէջ. և ըստ Պօղոս առաքեալի օրինակին անդուլ պէտք է լինի նորա եռանդը: «Քաջանան, ինչպէս յաճախ կրկնում է Գրիգորը, մեր Փրկիչ Աստուծոյ ծառան է, և ով որ մեր զոհն ու քաջանայապետն եղող մեծ Աստուծուն ինքն իրան չի մատուցանի կենդանի և սուրբ պատարագ, նորան արժանի չի լինիլ: Գրիգորը իրան առաջարկուած կոչումն ոչ միայն չէր արհամարհում, այլ ընդհակառակն այնպէս բարձր էր գասում, որ նորանից վախենում էր, իսկ յարակից արտաքին վտանգներից երբէք չէր վախենում և աւելի՝ այն վայրենի և կատաղի գազանից (Յուլիանոսից) որ սկսել էր եկեղեցուն չարաչար դէմ գործել:

Իւր փախստեան պատճառները այսպէս պարզելով՝ այնուհետեւ Գրիգորը պատմում է իւր վերադարձի պատճառները: Վերադարձի պատճառներն էին նախ՝ Նազիւնիցի եկեղեցու հոգսը, որ սիրելի և ցանկալի էր նորան. երկրորդ՝ իւր զառամեալ ծնողներին տանը իւր նամարկելու հոգսը, ծնողների՝ որոնք վշտացած էին աւելի իւր բացակայութեան՝ քան իրանց հասակի պատճառով. երրորդ՝ սուրբ մարդկանց օրինակը, որոնք նորան ցոյց էին տալիս, թէ ոչ ոք իրաւունք չունի Աստուծոյ կոչմանը հակառակել: Փարոզի մէջ չը յիշուած, բայց Բարսղի նամակի մէջ յիշուած չորրորդ պատճառն էր այն՝ որ այն ժամանակները աւելի վարակուած էին մոլորութեամբ և պէտք էր յինուել նոցա ուժին՝ որոնք իրանց ղեկքով և կրթութեամբ աւելի պատրաստականութիւն ունեին:

Այս քարոզը կարող եղաւ ժամանակաւորապէս դադարեցնել կուսակցութիւնների աղմկալի ձայնը, բայց դժբաղդաբար շուտով սկսեց գանգատել, թէ իւր քարոզները արդէն սկսել են Նազիւնիցի գացիներին տաղտկացնել և դէպ ի ինքն անտարբերութիւնը սկսուել

է: Նազխանգացիք սաստիկ ցանկացել էին քահանայացնել նորան, բայց երբ այդ յաջողել էր, իրանց ձեռք բերած գանձը հազիւ էին գնահատում:

Այդ ժամանակ կայսրն էր Յուլիանոսը, և շատ վտանգներ էին սպառնում եկեղեցուն: Քրիստոնէութիւնը յիսուն տարուց հետե կայսերութեան մէջ արդէն տիրող կրօն էր, և քրիստոնեաները թէև ամենաբազմաթիւը չէին, այնուամենայնիւ կայսերութեան մէջ ամենից աւելի կարող և աչքի ընկնող տարրն էին կազմում: Յուլիանոսն ամենախիստ ատելութեամբ էր վերաբերում դէպ ի քրիստոնեաները, նա յայտնապէս չէր հալածում նոցա, որովհետև ի բնէ խիստ չէր, և շատ լաւ գիտէր, որ նահատակների արիւնը քրիստոնէական եկեղեցու սերմն է: Բաց յայսմանէ, յայտնի հալածանքը այժմ անկարելի էր: Նա յոյս չուներ թէ բռնի կարող է արմատախիլ անել այն հաւատքը, որ իւր կնիքը բոլոր հաստատութիւնների վերայ դրել էր և կարելի էր նորա նշանները տեսնել ամեն տեղ, սկսելով զօրքի դրօշակից մինչև մասնաւոր քաղաքացիների դրօշմաւոր մատանիների վերայ: Բայց նա ամենայն հնարաւոր միջոց գործ էր դնում քրիստոնէական հաւատքը հարուածել և ճնշել: Նա թոյլ էր տալիս միայն որ քրիստոնեաները գալիլիացի կոչուէին: Քրիստոնէութեան դէմ ինքն էր գրում. տէրութեան դրօշակներից և բոլոր հասարակական հաստատութիւններից հեռացնում էր քրիստոնէութեան նշանը. թէ՛ հրապարակական և թէ՛ մասնաւոր զրոյցների մէջ նոցա մասին մեծ արհամարհանքով էր խօսում, իւր անդրին շրջապատել էր Զեւսի, Արէսի և Մերկուրի արձաններով, որպէս զի քրիստոնեաները իւր անդրիին սովորական յարգանքը մատուցանելիս՝ համարուէին մասամբ կոքերին երկրպագող և հաւատուրաց: Զօրքին հաւատարիմ ծառայութեան համար երգմենեցնելիս ինքն կռապաշտական նշաններով էր շրջապատուած լինում, և ոսկի ու ծխանելիք էր մատուցանում կոոց: Եթէ քրիստոնեայ կամ կռապաշտ զինուորը աստուածներին խուկ ծխէր կայսրը արժանացնում էր նորան իւր հայեացքին և դրամ էր շնորհում, որով շատերը հրապուրվում էին իրանց հաւատքը վաճառել: Նա իրան հեթանոս սովեստներով, հոետորներով և փիլիսոփանե-

րով էր շրջապատել¹⁾։ դատաստանական բոլոր հաստատութիւններից հեռացրեց հոգեւորականներին, նրանց հարկի տակ էր դրել, արգելել էր կտակներ կազմելու և կտակներով ժառանգութիւն ստանալու իրաւունքից։ Ամեն մի հնարաւոր դէպքում աշխատում էր քանդել եկեղեցիքը և կամ՝ հեթանոսական տաճար դարձնել։ Եղեսիայի եկեղեցուց յափշտակեց նորա ստացուածքը պատճառելով թէ «դժուարին է հարուստներին երկնքի արքայութիւն մտնելը»։ Հերիտիկոսութեան կամ ուղղափառութեան համար աքսորուած եպիսկոպոսներին յետ դարձրեց այն մտքով՝ որ կայսերութեան բոլոր քաղաքներում հերձուածը զօրացնէ։ Երբեմն էլ հակառակորդ կուսակցութեանց ներկայացուցիչներին իւր մօտ էր կանչում, որ իւր ներկայութեանը իրանց տարաձայնութեանց մասին վիճեն, որ նոցա՝ իրար փոխանակող փաստերը կատակէ ու ծաղրէ։ Բայց որ ամենավատն էր, նա արգելեց քրիստոնեաներին դասական (կլասիք) գրականութիւն դասաւանդելը։ Քրիստոնեայ մանուկը կարող էր մտնել իւր ցանկացած դպրոցը Հոմերոսը, Էսքիլէսը և Քուկիդիտէսը ուսումնասիրելու համար և այդ տեսակ ուսումն նա կարող էր միայն հեթանոս վարժապետից սովորել։ Այդ մեծ գրողները, արդարացնում էր Յուլիանոսը իւր վճիռը, հեթանոս էին, և ես չեմ կամենում, որ նոցա դասախօսողներն լինեն հին կրօնը չդաւանող մարդիկ»։ Մեզ են պատկանում, ասում էր նա, ճարտասանութիւնը, Յունաստանի գեղարուեստները և աստուածներին պաշտելը, իսկ ձեզ գուհկութիւնն և անկրթութիւնը։ Այդ է ձեր իմաստութիւնը»։ Յուլիանոսի նախապաշարման բոլոր ուժը դիւրին է երեւակայել, երբ նա կարողանում էր այդպէս խօսել այնպիսի մեծ քրիստոնեայ մարդոց ժամանակ, որպիսի էին Հերոնիմոսը, Ամբրոսիոսը,

1) Նա չափից դուրս անձնատուր էր եղել իւր սիրելիներին։ Մաքսիմոս սոփեստը երբ Կ. Պօլիս հասաւ՝ Յուլիանոսը նորան ընդառաջելու համար իւր կարեւոր գործերը թողեց, նա Լիբանիոսին ասաց թէ յոյս ունի որ ինքն նորա արժանաւոր բարեկամը կլինի։ Նա Եամբլիքին վեր էր դասում հին ամենայարգելի փիլիսոփաներից և ասում էր թէ Եամբլիքի մի նամակը Լիւդիայի բոլոր ոսկիներից թանգ է։

Աւգոստինոսը, Բարսեղն ու Գրիգոր Նազիանզացին: Նա իւր կարծեցեալ բարեխղճութեամբը ծածկում էր իւր անսիրտ խարդաւանքը՝ և իւր նշաւակելի ներուզամտութեամբը՝ խորին կերպով գաղուած չարութիւնը:

Ակամայ հարց է առաջ գալիս թէ, այնքան ընդունակ և շատ բաներում ճարպիկ մի թագաւոր ինչպէս էր կարողանում իւր քսան և չորս ամեայ հասակում դէպի քրիստոնէական հաւատքը այնպիսի կատաղի ատելութիւն տածել, և անհեթեթ միջոցներ ձեռք առնել արդէն կազմալուծուած Հեթանոսութեան կմախքը վերակենդանացնելու համար: Եթէ մնացած լինէին քրիստոնէութեան դէմ գրած Յուլիանոսի գրքերը, գուցէ այդ հարցին կարողանայինք պատասխանել աւելի ճշգրտէն: Դժուար չէ միանգամայն և՛ նկատել, որ նա հազիւ թէ կարողանար գրաւուել իւր ընտանիքը կոտորող Կոստանցիոսի պէս մարդու հաւատքով, կամ Եւսեբիոսի հաւատով՝ որ հանգամանքներին յարմարուող պալատական էր: Նա դէպի այն հոգեւորականութիւնն էլ, որին ինքն յանձնուած էր Կոստանցիոսից, ոչ մի հաւատարմութիւն չունէր: Քրիստոսի բնաւորութիւնը իւր իսկական մեծութեամբ և լուսով բնաւ չէր հանդիսացել նորա առաջ: Խոգեր մատակարարող և Մացիլլում նրան գիրք հասցնող անարգ Գէորգը, և, կայսրների տրամագրութեան համեմատ երբեմն ջերմեռանդ քրիստոնէայ և երբեմն կատաղի կռապաշտ և դարձեալ քրիստոնէայ փոփոխուող Հեկեթօլիոս սովետոր որ խնդրում էր ամեն մէկին իւր պէս բնթանալ եկեղեցւոյ դռների մօտ ¹⁾—այդպիսի անձինք հազիւ թէ կարող լինէին իրանց օրինակով գրաւել և հրապուրել զգայուն և տպաւորութեան ենթարկու երիտասարդին: Նորա գիտեցած և նշաւակած քրիստոնէութիւնը քրիստոնէութիւն չէր, այլ զանազան սնապաշտութեանց և չոր ու ցամաք արարողութիւնների հաւաքածո: «Կալիլիացիք, ասում էր նա, աստուածներին երկրպագելը թողել են, որ մահկանացուների փողոց դիակներն աստուածացնեն. նոքա ամեն

¹⁾ Նա ընկնելով եկեղեցւոյ դռների առջ, գոչում էր. եղէք իմ պէս, որովհետեւ ես իւր համը կորցրած աղն եմ:

բան լցրել են գերեզմաններով և շիրիմներով: Նա քրիստոնեաներին սովորաբար «ոսկրապաշտ» արհամարհելի կոչումն էր տալիս: «ՆաՀատակ կոչուող մարդիկն են, բացագանչում էր Եւնապիոս Սոփեստը, աստուածները, որոնց երկրպագութիւն են մատուցանում մարդիկ, և որոնց աղած և թթու դրած ոսկրների առաջ արեղաներն ու եպիսկոպոսները երկիւղածութեամբ ծուներ են դնում: Այսպէս, Համակարգութիւնը (սիստեմա) որով դաստիարակել էին նորան՝ նորա մէջ թողել էր այն արհամարհող տպաւորութիւնը՝ թէ քրիստոնէութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ ատելի հրէութեան անիմաստ արտավիժումն: Մինչդեռ նա յափշտակուած էր յունական գրականութեան գեղեցկութեամբը և նորա սիրելիներն էին Պլուտարքոսի հերոսները: Նա հեթանոսութիւնը տեսնում էր մասամբ՝ կախարդանքի այն փայով՝ որով շրջապատել էին նրան ճարտարաբանութեան և բանաստեղծութեան հռչակաւոր ներկայացուցիչները, և մասամբ էլ՝ փիլիսոփայական խորհրդածութիւնների մուայլ ծածկութի մէջ, որով նորան (հեթանոսութիւնը) պարուրել էին Լիբանիոսի և՛ Եւնապիոսի պէս փայլուն հռետորները: Մինչդեռ քրիստոնէութիւնը, որի ականատես վկան էր ինքն, արդէն կրում էր իւր մէջ (ըստ նորա կարծեաց) անկման հրեոյթներ, բարոյական մակերեւոյթի ցածրանալն քայլ առ քայլ առաջ էր գնում նորա բարօրութեան հետ: Քրիստոնէական սրբութիւնը արատաւորուած էր կռապաշտութեան ազդեցութեամբ. և քրիստոնէութիւնը մի քանի պարագաներում աշխարհային ունայնութեամբ և սնահաւատութեամբ էր վարակուած: Հոգեւորականութիւնը, նորա մեծագոյն ուսուցիչների վկայութեամբ, որքան իշխանութեամբ զօրացաւ, այնքան էլ իւր մաքրութեան մէջ կորուստ ունեցաւ: Հասարակութեան վատ ուղղութեամբ ղեկավարուող կարծիքով հաստատուած ամուրիութիւնը արդէն տիւրը երեւոյթներ էր առաջ բերել: Մենք, ասում է Կրիզոստոմ, մեր հալածանքի և թշուառութեան ժամանակ վաստակած փառքն ու զօրութիւնը մեր բարօրութեամբ խանգարեցինք: Այն ժամանակ երբ Յուլիանոսը յափշտակուած էր կիւնիկեանների ¹⁾ լուրջ խստակեցութեամբը,

1) Երկրային բոլոր վայելքը արհամարհող փիլիսոփայական մի աղանդ:

քրիստոնեայ կրօնաւորների ինքնատանջութիւնիցը զգուում էր: Նորա ատելութիւնը աւելի շարժում էր մեղքը, որ այն ժամանակ թուլացրել և խրամատել էր հկեղեցին, այն է՝ կատաղի կուսակցութիւնը, առանց շառագունելու՝ թշնամութիւնը և աստուածաբանական, ու շատ անգամ էլ չնչին տարաձայնութիւններից բորբոքուած վայրենի ատելութիւնը: Նորա յորդորները քրիստոնեաներին դէպ ի ներողամտութիւն և իրանց կրօնական ազատութեան գնահատելի շահերը, իզուր անցան: Նա փորձով եկաւ այն եզրակացութեան, որ ամենակատաղի և վայրենի կենդանին դէպ ի մարդիկ հազիւ այնքան վայրագ և կատաղի լինէր՝ ինչպէս էր միմեանց դէմ քրիստոնեաների մեծամասնութիւնը: Յիրաւի, տեսնում էր նա քրիստոնէական շատ հաստատութիւնների բարեբարութիւնները, ինչպէս օրինակ մեռածների մասին հոգսը, հիւրասիրութիւնը, աղքատներին ողորմելը, և հասարակաց աղօթից հանդիսաւորութիւնը. բայց նա սխալմամբ երեւակայում էր, որ այդ բարեգործութիւնները, առանց նոցա աղբիւրի, որից բղխում էին, կարելի է հեթանոսութեան վերայ էլ պատուաստել: Նա այնքան էլ չէր իմանում թէ, հեթանոս կանայք չեն կարող հաւատարուել քրիստոնեայ կանանց՝ որոնցով նա հիացած էր, ոչ էլ հեթանոս քուրմերը կարող էին նմանել քրիստոնեայ հոգեւորականութեան բարեբարոյ մասին, և ոչ էլ հեթանոս սոփիստները այնպիսի մարդոց՝ որպիսի էին Ամբրոսիոսը, Գրիգորը և Բարսեղը: Եւ այսպէս նա իւր ամբողջ կեանքը սպառում էր յուսալով նուաճել յաւիտենական կրօնքը, և վերածնել կռապաշ-

Կիւնիկեանները կարծում էին թէ մարդս պէտք է ամաչէ միայն մոլութիւններից: Այս աղանդի հիմնողն էր Անտիմոն Աթենացին, Ամենամեծ Կիւնիկը Դիոգինէսն էր որ Քրիստոսից առաջ 414 թուին ծնուեց Սինոպում և վախճանուեց 320 թուին ն. ք. Ք.: Այժմ կիւնիկ կամ ցինիկ կոչվում են այն մարդիկ՝ որ արհամարհում են հազուստի և շարժածքի վայելչութիւնը, խօսքի մէջ կոպիտ և անպատկառ են և շատ անգամ էլ անբարոյական: Յինիկ, հայերէն անդրադարձուած է յունական Kynikos (կինիկոս) բառից՝ կիւնիկ, բառացի թարգմանութեամբ՝ շնական, չայ թարգ.:

տուժիւնը, որ այնքան պատիր, դատարկ և մեռած էր, մինչ Դաբենի անտառում, Ապողոնի Հանդիսաւոր տօնին, նշանաւոր, փառաւոր և նուիրական վայրում մէկը չը գտնուեց, որ տօնուող չաստուծուն զոհ մատուցանէր, բաց ի մի քրմից, որ իւր հաշուով գնած մի սագ բերեց: Անտիոքում առանձին յարգանք էր վայելում Բաբելաս նահատակը, երբ նորա նշխարքը Փեբի նուիրական անտառից հեռացրեց Յուլիանոսը, նորա նշխարը կրող սայլին ուղեկցում էր բազմաթիւ ժողովուրդ, որը Հիանալի Հանդիսաւորութեամբ երգում էր բարձրաձայն. «Թող խոռովութեան մէջ ընկնեն նոքա ամենքը, որոնք զանազան նմանութիւնների են աղօթում, որոնք յարած են ունայն աստուածներին»:

Նոյն ինքն Ամիանու-Մարցելոսը թոյլ էր տալիս իրան ասել, որ Յուլիանոսը քրիստոնեաների վերաբերութեամբ ինքն իւր նման չէր: Նորա ատելութիւնը չէր կենդրոնանում գլխաւորապէս քրիստոնեաների հասարակ դասակարգի վերայ, այլ՝ գլխաւոր առաջնորդների վերայ, որպիսի էին Բարսեղը և Աթանասը: Զը նայելով Կեսարիոսին (Գրիգոր-Աստուածաբանի եղբայրը) հեթանոս դարձնելու անյաջող փորձին Յուլիանոս այնու ամենայնիւ նորան, որպէս կայսերական բժիշկ՝ պահում էր իւր մօտ: Բաց ի սորանից՝ նա Նազիանգացի ընտանիքի հետ ուրիշ յարաբերութիւն չուներ: Շատ անգամ նորա պաշտօնեաները իրանից աւելի բռնակալ էին: Իմանալով, որ Յուլիանոսը ցանկանում է եկեղեցիները կռատուն դարձնել, նորա կայսերական պատուիրակը զինուորների բանակով Նազիանգ հասաւ և պահանջեց, որ եկեղեցին կամ իրան յանձնեն և կամ քանդեն: Բայց զառամեալ եպիսկոպոսը (Գրիգոր-Աստուածաբանի հայրը) այնպիսի վճռական ընդդիմութեամբ հանդիպեց նորան, որ նա պարտաւորուեց տեղի տալ և հեռանալ ոչ մի վնաս չը հասցնելով: Անդրանիկ Գրիգորը (Աստուածաբանի հայրը) նոյնպիսի նշանաւոր եռանդ ցոյց տուեց ոչ միայն Յուլիանոսի առաջ, այլ և 362 թուին Կեսարիայի եպիսկոպոսի ընտրութեան ժամանակ իւր եղբայրակից եպիսկոպոսների առաջ: Այս աթոռի համար ժողովուրդը բռնի Եւսեբիոսին էր ընտրել: Յուլիանոսը հակառակ էր այս

ընտրութեանը, որովհետեւ դորանով ինքն գրկւում էր Եւսեբիոսի քաղաքական օգտակար ծառայութիւնից: Ժողովուած գաւառական եպիսկոպոսներն էլ այս ընտրութեանը հակառակ կանգնեցին, որովհետեւ նախ քան ընտրութիւնը նոցա խորհուրդը չէին հարցրել: Անդրանիկ Գրիգորը թէեւ գաւառական մի աննշան քաղաքի եպիսկոպոս՝ բայց պաշտպանեց ժողովրդի իրաւունքը և գրեց այնպիսի աներկիւղ նամակ գաւառի կառավարչին, որ, թէ Յուլիանոս և թէ եպիսկոպոսները զիջան և Եւսեբիոսի ընտրութիւնը հաստատուեց:

363 թուին Յուլիսի 27-ին պատահած Յուլիանոսի մահից յետ Գրիգորը նորա դէմ երկու դիրք գրեց: Եթէ մի կողմից Հեթանոսները Յուլիանոսին չափազանց բարձրացնում էին, միւս կողմից էլ նորա դէմ անարդարութեամբ էին վարուում: Իւր ընդունակութիւններով նա շատ բարձր էր Լիբանիոսից և իւր բարձր գնահատած սովեստներից: Նիբուրը նորա Միսոպօգօն զիրքը համարում էր «այն հազուագիւտ արտադրութիւններից մէկը՝ որ յունական գրականութիւնը իւր կեանքի երկրորդ շրջանում կարող էր արտադրել»: Նա իրան գազող, անխոնջ և քաջ տղամարդ էր. բաց ի դէպ ի քրիստոնէութիւնը ունեցած իւր յարաբերութիւնից, նա միշտ գթութեամբ և արդարութեամբ էր գործում: Որքան և մոլորուած լինէր իւր գլխաւոր նպատակում, այնուամենայնիւ, նա անկեղծութեամբ էր հոգւում իւր կայսերութեան երջանկութեան մասին: Նա շատ իմաստութիւն և առաքինութիւն էր ուսել իւր ատած կրօնքից (քրիստոնէութիւնից). և մի նշանաւոր փաստ չը կայ նորան արբեցութեան և անառակութեան մէջ մեղադրելու, որոնցից, ինչպէս վկայում է Մարցելոս-Ամիանոսը, նա զերծ էր:

Կոստանցիոսի սպանութեան գործում աւելի պակաս մեղադրելի է Յուլիանոս. Իսկ քրիստոնեաները չէին կարող նորան ներել, որ նա կորստաբեր ցնորքների ետեւից ընկնելով՝ տալիս ու վրայ արեց աշխարհը: Եթէ Յուլիանոսը քրիստոնեայ լինէր, նորա վարչութիւնը կարող էր բարեբար ազդեցութիւն ունենալ, բայց որպէս հաւատուրաց՝ նա քաղաքներում և գաւառներում խռովութիւն

ձգեց, ընտանիքների մէջ բաժանումն ձգեց, ամուսնական գործում ապահարգան թոյլ տուեց, և բոլոր կայսերութեան մէջ ընդհանուր սարսափ ու թշուառութիւն առաջացրեց: Աշխարհին սուրբ գաղտնիքներ և ազնիւ միտթարութիւն բերող կրօնքը նա կամենում էր խափանել. և աշխարհը դարձնել յամեն տեսակ ախտերի հովանաւորող դեւերի և յուշկապարիկների երկրպագութեան: Ահա թէ ինչո՞ւ Գրիգորը նորա մասին մի լաւ խօսք անգամ հնարաւոր չէ համարում ասել: Իւր առաջին գրքում նա շօշափում է նորա բռնութիւնները քրիստոնէութեան վերաբերութեամբ, որի մէջ չափաւորութեան պատրուակի տակ Յուլիանոս իսկական բռնութիւն էր գործ դնում: Նա Յուլիանոսին մեղադրում է որպէս սնահաւատ և թեթեամիտ ոք և անուանում է «եզն այրող»: Նորա սնապաշտութեան մասին զանազան պատմութիւններ է անում: Գրիգորը նորան ոչ միայն հաւատուրաց այլ և համաշխարհային թշնամի, ընդհանուր սպանիչ, ասորեստանցի վիշապ և առաջին չարիք է անուանում, այնպէս որ, պարսկական պատերազմի ժամանակ նա ուղեկից է ունեցել իրան որպէս թէ դեւերի լէգէօն: Այս մասին Յուլիանոսի վերաբերութեամբ Գրիգորը հանդիսանում էր որպէս հասարակաց կարծիքն արտայայտող. կարծիք՝ որ հասարակ ժողովուրդը աւելի ևս սուր կերպարանքով էր արտայայտում: Նորա մահուան լուրը ընդունվեց Անտիոքում անսովոր հրճուանքով: Անհաւատների ներկայութեամբ թատրոններում խաչի փառաբանութեան բացականչութիւններ եղան. եկեղեցիքն ու նահատակների վկայարանները հանդիսարան դարձան անվայել պարերի:

Ապագայ պատմութիւնը Յուլիանոսի մասին աւելի ներդրամտութեամբ է խօսում: Նոյն ինքն Գրիգորն էլ թոյլ տուեց իրան ասելու՝ որ այս անբաղդ կայսրը չափաւորութեամբ էր կառավարում և ի բնէ հալածող չէր: Քրիստոնէայ բանաստեղծ Պրուտենցիոսն անգամ ինչպէս և հեթանոս Աւրելիոս Վիկտորը խոստովանում է նորա քաջ զինուոր, ընդունակ օրէնսդիր և անկեղծ հայրենասէր լինելը և նորա մասին ասում է, թէ և նա երեք հարիւր հազար աստուածներ էր սիրում այնու ամենայնիւ՝ աշ-

խարհի համար անկեղծութեամբ էր հոգում. և թէև, նա Աստուծոյ դաւաճան էր, բայց աշխարհի՝ ոչ:

Բայց և այնպէս մնում է անհերքելի այն փաստը, որ դէպ ի քրիստոնեան ուղղած արհամարհական հարցին թէ ի՞նչ է «շինում գալիլիացի հիւսն», քրիստոնէի պատասխանը թէ «դագաղ է շինում»—Յուլիանոսի մեծութեան համար դագաղ, ճշմարիտ էր: Հաւանական ապացոյց չը կայ որ Յուլիանոսը իւր մահուան ընկերն բացագանչած լինի. «Յաղթեցիր ինձ, գալիլիացի», կամ անարգած լինի աստուածներին և յատկապէս արեւին: Սակայն նորա վերջին խօսքերի մասին այս և սորա նման զրոյցները մարգարէական պատմական նախագուշակութեան ապացոյցն են, որ նորա անկմամբ կատարւում էր. «Նա, ով որ կը զարկուի այս քարին՝ կը խորտակուի. իսկ ում վերայ որ քարն ընկնի, մոխիր կը դարձնի»: Յուլիանոսի կատարեալ անաջողութիւնը նորա մոլորութեան ամենակատարեալ պատիժն էր: Նա ծիծաղել էր քաղղէացի զառամեալ Մարիս եպիսկոպոսի վերայ նորա կուրութեան պատճառով, բայց ինքն նորանից աւելի կոյր էր: Նորա դժպէտի խորհուրդը, փոխանակելու քրիստոնէութիւնը հեթանոսութեամբ՝ վարագուրած էր նէօպլատոնական փիլիսոփայութեան շլացուցիչ միգով, ի կորուստ մատնեց թէ՛ նորա տաղանդն և թէ՛ վաստակները: Այս տեսակ ցնորքներով նա ոչ մի բան չէր կարող անել: Նորա պատերազմները, օրէնքները և մեծագործութիւնները իրանից երկար չապրեցին: Նորա ճարտարաբանութիւնը, զօրավարութիւնը և բոլոր ջանքերը ապարդիւն անցան: Նորա ամենամեծ ջանքը կարողացաւ միայն արտադրել բազմաստուածութիւնը ցնցող հոգեվարքի շնչառութիւնները, որոնք վերջնական քայքայման նախագուշակներն էին: Աթանասը իւր արևակէզ անապատներում, Բարսեղը իւր պոնտական առանձնութեան մէջ աւելի մեծ ոյժ էին ներկայացնում քան Յուլիանոսը իւր կայսերական գահի վերայ: Մարկոս-Աւրելիոսի ախոյեանը չարատանջ մարդկութեան համար աւելի պակաս գործեց քան անանբաղդ Կրիսպոսի հայրը: Նա ոչ մի ծանրաբեռնեալի լուծը չը թեթեւացրեց, ոչ մի ստրկի շղթան չը խորտակեց: Աստուածները, ո-

րոնց մասին նա այնպէս հոգումէր, նորան այն դաշտը մղեցին՝ ուր նա կորցրեց իւր կեանքը, իսկ Հռոմը՝ իւր փառքը: Անիծեալ Հեթանոսութիւնը քայքայեց և կորցրեց իւր վերջին Հերոսի բաղդաւորեց՝ նոյ շնորհները և կազմալուծեց՝ ինչ որ նա բարի համարելով՝ գործել էր:

Եւ այս ձախորդութեան նայելով՝ շատ Հեթանոսներ քրիստոնէական վարդապետութեան աստուածային գեղեցկութեամբ հրապուրուած, քան երբ իցէ կը կարողանային բանաստեղծի հետ գոչել.

Ո՛հ, Ելլադայի սնոտի և սուտ աստուածներ,

Դուք, համրների պէս լուռ էք.

Իսկ ես բարկութեամբ կը ջարդեմ՝ այն բաժակը՝

Որով ձեզ այնքան գինի եմ նուիրել,

Թող կորչի մոխրի մէջ նենգաւոր խմիչքը,

Թող ընդ միշտ անցնեն ձեր փառքի օրերը,

Սկսեալ ա՛յն օրից՝ երբ վախճանուեց ինքն յարազուարճ Պանը:

(Նարո-Նալեֆ)

Յ. Վ. Մ.



ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹԻՒՆ

(Նարո-Նալեֆ-Լիւն).

Քրիստոնէական հաւատը դնում է նոցա վերայ փոխադարձ պատասխանատուութիւն նոցա հոգւոց փրկութեան համար — պատասխանատուութիւն, որ արտաքոյ քրիստոնէութեան անյայտ է: Միայն այս հաւատն է նրանց ընդունակ անում խաչը կրելու — լինի դա համբերութեան ջանքն, որ նոքա պէտք է ցոյց տան միմեանց իւրեանց մեղաց համար, թէ արտաքին վիճակն, որ նոքա պիտի տանեն միասին: Խաղաղութեամբ զարգանալով հաւատի և սրբութեան մէջ ամուսնութիւնը պէտք է մերձենայ այն գաղափարին, որ ներկայացնում է Առաքեալն, երբ մարդու և կնոջ դաշնադրութեան մէջ